ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766 darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 38

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.11.2020 Թ ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի պահանջով

ա վ ա գ ա ն ի ն ո ր ո շ ու մ է

1. Հաստատել Դարակերտ համայնքի ավագանու 19.11.2020թ. թիվ 09 նիստի օրակարգը
1/Դարակերտի համայնքապետարանի համայնքի ղեկավարի վարձատվության չափը, աշխատակազմի աշխատակիցների և Դարակերտ համայնքի Հ.Միրզոյանի անվ. մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
2/Դարակերտ համայնքի 2021թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3/Դարակերտի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները հաստատելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ
ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766 darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 39

ԴԱՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ, Հ.ՄԻՐԶՈՅԱՆԻ, ԱՆՎ. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 28 և 11 կետերի պահանջներով՝

ա վ ա գ ա ն ի ն ո ր ո շ ու մ է

Հաստատել Դարակերտի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և Դարակերտ համայնքի, Հ.միրզոյանի անվ. մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և համայնքի ղեկավարի վարձատրության չափը համապատասխանաբար համաձայն N1 և N2 հավելվածների

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային Դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		310000
Հայեցողական	պաշտոններ	
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	175000
Համայնքային	ծառայության	պաշտոններ
Աշխատակազմի քարտուղար /1,2-1/	1	230000
Աշխատ.առաջատ.մասնագետ /3,1-1/	1	206000
Աշխատ.առաջատ.մասնագետ /3.1-3/	1	206000
Աշխատ.երկրորդ կարգիմասն /3.3-1/	1	165000
Կրթության, մշակույթի, սպորտի	աշխատակիցներ	

սպորտ մեթոդիստ	1	92000
գրադարանավար	1	165000
Տեխնիկական սպասարկումնիրականացնող	անձնակազմ	
Պահակ,էլեկտրիկ	1	150000
Հավաքարար	1	115000
Անասնաբույժ	0,5	46100

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Մանկապարտեզի տնօրեն	1	200.000
Հաշվապահ	0,5	190.000
Տնտեսվար	0,5	182000
Դաստիարակ	3 * 1,25	145000
Դաստիարակի օգնական	3* 1	100000
Երաժշտության դաստիարակ	0,75	150000
Խոհարար	1	100000
Խոհարարի օգնական	0,5	190000
Բուժքույր	0,75	127000
Դռնապան, բակապահ	1 հաստիք	95.000
Հավաքարար	0.5	190.000

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հովհաննիսյան Արթուր
Միրզոյան Գրիգոր
Սիմոնյան Արտակ
Սիմոնյան Գարիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ.ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766, darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2020 թվականի N 40

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 18,19 կետերի, <Տեղական տուրքերի և վճարների մասին> 11 և 12 հոդվածների պահանջներով՝

ա վ ա գ ա ն ի ն ո ր ո շ ու մ է

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնքում 2021 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի / թույլտվության համար՝
ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:
բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000դր.

- 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 25000դր.
- 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000դրամ
3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 դրամ
գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
-Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ
-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափ ային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի

1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ 2500 դր:

4) Համայնքի վարչական տարածքում Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

150.000 դրամ:

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30.000դրամ.

6) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500դրամ,

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5100 դրամ,

--50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

-100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,

--200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ 3500դրամ.

- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5100 դր.

- 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ 7000 դրամ

100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,

--200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ,

7) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար 175 դրամ մեկ քառակուսի մետրի համար :

8) Համայնքի վարչական տարածքում առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝

ա. Առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ

բ. Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 25.000 դրամ.

9) Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա. հիմնական շինությունների ներսում ՝
-մինչև 26 քմ մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ
բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ:
10) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան Համայքնի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1000 դրամ.
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1750 դրամ.
գ.սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ .
դ.այլ արտաքին գովազդի համար 750 դրամ .
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% -ի չափով,
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով,
11) ՀՀ համայնքների խորհրդանիշերը (զինանշան անվանում և այլն),որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50.000 դրամ
12. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ:
13) Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ:
2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկված է 0,5 գործակցի կիրառմամբ:
2.1 Առաջին գոտում գտնվող և գործող օբյեկտների տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկել է 0,75 գործակցի կիրառմամբ :
3.Դարակերտ համայնքի <Դ.Լադոյան> փողոցը /թիվ 1-137/ համարել առաջին գոտի:
Տեղական վճարներ՝
1. Համայնքի տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.
1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ,
2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների / այդթվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընլայնումն ու բարեկարգումը / կառուցման

ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ,
3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ,
4) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000դրամ,
5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000դրամ:
6) Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար ամսեկան՝
ա. Աղբահանության վճարը 1 մեկ անձի համար սահմանել՝ 130 դրամ,
բ. Իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող՝ '
- առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար աղբահանության վճարը սահմանել՝ 50 դրամ
- արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների, հասարակական տարածքների ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ աղբահանության վճարը սահմանել՝ 6 դրամ,
- կրթական,մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների մեկ քառակուսի մետրի համար՝ 3 դրամ
7) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 4000 դրամ
-Մեկ ընտանիքում մանկապարտեզ հաճախող երկու երեխաների համար փոխհատուցման գումարի չափը սահմանել՝ 4000 դրամ
- Հարևան համայնքներից Դարակերտի մանկապարտեզ հաճախող 1 երեխայի հաշվով ծնողական գումարի ամսեկան վարձիչափը սահմանել՝ 11000 դրամ,
8) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝1000դրամ
9) Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափեր սահմանել՝
9,1)Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ,
9,2)Ծննդօգնություն՝ թեթև միջամտություն՝1000 դրամ,
Ծանր միջամտություն՝ 5000 դրամ,
9,3) Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների) մանր կենդանի 100 դրամ, խոշոր կենդանի՝ 200 դրամ,
9,4) Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ,
9,5) Ախտահանություն 1 քմ –ը՝ 200 դրամ,
9,6) Միջատազերծում (դեզինսեկցիա) 1 քմ-ը՝ 100 դրամ,
9,7) Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քմ-ը՝ 200 դրամ,

9,8) Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ,
9,10) Կենդանու հերձում՝ մանրկենդանի `1000 դրամ, խոշոր կենդանի՝ 3000 դրամ,
9,11) Կենդանուբուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը՝ 1000 դրամ,
9,12) Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից մանր կենդանի՝ 1000 դրամ, խոշոր կենդանի՝ 2000 դր.
10.Համայնքի տարածքում բոլոր հարկ վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ
ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարակերտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարակերտ, (0236) 6 13 01, (094)200766 darakert.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 41

ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 32-րդ կետի պահանջներով՝

ա վ ա գ ա ն ի ն ո ր ո շ ու մ է

Հաստատել Դարակերտ համայնքի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները՝

թվով 96 անուն 158.262.997 դրամ արժեքով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ
ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՍԻՄՈՆՅԱՆ